Արձանագրություն N 3
<<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի << ք. Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների>> ձեռքբերման բացման նիստի շարունակության

28 հուլիսի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Եղիազարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Խոջայան /գնահատող/,
Գ. Գևորգյան /բացող/, Ա. Աշուղյան /բացող/
Բացակայում էր՝ Գ. Մնացականյան /գնահատող/,

1. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանության շտկման մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի, <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ-ի /Համատեղ գործունեություն/ և <<Վանարխ>> ՍՊԸ-ի, <<ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ>> ՍՊԸ-ի /Համատեղ գործունեություն/ կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները հրավերով սահմանված ժամկետում շտկվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ռ. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

h/h	Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ	Բավարար
2	<<ՀԱՐԳ>> ՍՊԸ, <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> /Համատեղ գործունեություն/	Բավարար
3	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	Բավարար
4	<<Կարոշիննախագիծ>> ՍՊԸ	Անբավարար
5	<<Երևաննախագիծ>> ՍՊԸ	Բավարար
6	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	Բավարար
7	<<Գողթն>> ՍՊԸ	Բավարար
8	<<Վանարխ>> ՍՊԸ, <<ՍՌՍ-ԶՎԵԶԴԱ>> ՍՊԸ	Բավարար

	/Համատեղ գործունեություն/	
9	<<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ <<ՎԻԼ-ՍԵՄ>> ՍՊԸ /Համատեղ գործունեություն/	Բավարար
10	<<Արխի-Տուր>> ՍՊԸ	Բավարար
11	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	Բավարար
12	<<Այր Դիզայն>> ՍՊԸ	Բավարար
13	<<Սթեմ>> ՍՊԸ	Բավարար
14	ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	Բավարար

**Մասնակցի անբավարար գնահատականի հիմնավորումը ներկայացված է սույն ընթացակարգի թիվ 2 արձանագրության 4.2 կետում:*

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Բանակցային ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ն, 2-րդ տեղ՝ <<ՀԱՐԳ>> ՍՊԸ-ն, <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն /Համատեղ գործունեություն/, 3-րդ տեղ՝ <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ-ն /Համատեղ գործունեություն/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 28.07.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

4.2 28.07.2016թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հաշվի առնելով, որ <<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ -ն ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ /մասնակցի ներկայացրած գնային առաջարկը ցածր է գնման առարկային 75 տոկոսից/՝ հանձնաժողովը որոշեց մասնակցից պահանջել լրացուցիչ հիմնավորումներ՝ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշման հաստատված կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի:

4.4 Հրավերով սահմանված ժամկետում 4.2 և 4.3 կետերում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

5. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստիանցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 3-ին ժամը 15:30-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Եղիազարյան

Անդամներ՝ ---------- Ռ. Խոջայան

---------- Գ.Գևորգյան

---------- Ա. Աշուղյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան